ԼԵՆԻՆԱԿԱՆԻ ՀԱՏԱԿԱԴՏՈՒՄԸ ԵՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄԸ XVIII—XIX ԴԴ.

Ս. Ղ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Լենինականը (Կումայրի, Գյումրի, Ալեքսանդրապոլ) Հայաստանի հնաոյն բնակավայրերից է։

1934 թ. պեղումների շնորհիվ երևան եկավ Լենինականի հին բնակատեղին՝ բնակարաններով ու դամբարաններով։ Ենթադրվում է, որ այդ բնակավայրը կործանվել է մ. թ. ա. VIII դ. ուրարտական արշավանքների ժամանակ[1], սակայն հետագայում վերականգնվել է, որովհետև 401 թ. (մ. թ. ա.) հույն զորավար և պատմաբան Քսենոֆոնն անցնելով Հայաստանով հասնում է «մեծ, հարուստ և բազմամարդ Գյումնիաս քաղաքին»[2]։ Հ. Մանանդյանը «Գյումնիաս» քաղաքը նույնացնում է Կումայրիի հետ[3]։

Կումայրին դրականության մեջ առաջին անգամ հիշատակում է Ղևոնդ պատմիչը՝ VIII դ.[4]։ Միջնադարում, Բագրատունիների օրոք, այն ծառայել է իբրև զորանիստ վայր, ուր և կառուցվել է ամրոց։

1828—1830 թթ. Կարսից, Էրզրումից, Արդահանից և այլ քաղաքներից գաղթած բազմաթիվ հայ ընտանիքներ բնակություն են հաստատում Գյումրիում և տեղացիների հետ մեկտեղ իրենց քաղաքաշինական դարավոր փորձը շաղկապում ռուսական քաղաքաշինական առաջավոր մշակույթին. նրանք ստեղծում են միմյանց խաչվող, ուղիղ փողոցներ ունեցող ցանցաձև հատակագծային սիստեմով բնակավայր և նոր կերպարանք տալիս պատմական Գյումրիին։

Ալեքսանդրապոլ—Լենինականի վաղ շրջանի տեղադրական հատակագծի և կառուցապատման վերաբերյալ նյութերի բացակայությունը դժվարացնում է քաղաքի հատակագծման և կառուցապատման զարգացման ուսումնասիրությունը։ Սակայն սկսած XIX դ. ինչպես քաղաքի տեղադրական հատակագծի, այնպես էլ նրա կառուցապատման մասին որոշ պատկերացում են տալիս 1840 և 1872 թթ. կատարված գլխավոր հատակագծերը, ինչպես նաև 1850, 1878, 1880 և 1900-ական թվականներին քաղաքը պատկերող լուսանկարները, օտարազգի և հայրենական մի շարք ճանապարհորդների նկարագրություններն ու ուսումնասիրությունները։

Քաղաքի տեղադրական հարցերը քննության առնելուց առաջ ասենք, որ 1829 թ. հայերի ներգաղթը կազմակերպող հանձնաժողովին ցուցում էր տրված եկվորներին բնակության տեղ հատկացնելիս, հաշվի առնել նրանց նախ-

1 «Խորհրդային Հայաստան». 21. X. 1934 (տե՛ս Աշխ. Քալանթարի «Նախախալդական բնակատեղի Լենինականի մոտ» հոդվածը)։

2 Քսենոֆոն, Անաբասիս, Երևան, 1970, էջ 104։

3 Հ. Մանանդյան, Հին Հայաստանի և Անդրկովկասի մի քանի պրոբլեմների մասին, Երևան, 1944, էջ 16—17։

4 «Պատմութիւն Ղևոնդայ մեծի վարդապետի Հայոց», Ս. Պետերբուրգ, 1887, էջ 137—138։

կին բնակավայրերի բնա-կլիմայական պայմանները։ Այս մասին Երիցյանը գրում է. «Հրահանգված էր, որ գաղթականները բնակվեն ամբողջ գյուղերով, առանց միմյանցից անջատվելու, այնպես ինչպես բնակվելիս են եղել։ Գաղթականներին բնակեցնել հարմար և առողջարար վայրերում, ուր կարելի լինի լավ ջրի պակասությունը չզգալ»[5]։

Այս էր պատճառը, որ Կարսեցի, Էրզրումցի 2500 ընտանիքների մի մասըն անցնելով Ախուրյան գետը, բնակություն հաստատեց Գյումրիում, իսկ մյուս մասը՝ Թալինի, Ապարանի և Լոռի-Փամբակի շրջաններում[6]։

Քաղաքի տեղանքի մանրամասն նկարագրությունը տվել է անգլիացի ճանապարհորդ Լինչը. «Պատկերացրեք նախ և առաջ ոչ խորը գետ, որը հոսում է դեպի հարավ, թեթևակի ափսեաձև, բայց ընդարձակ դաշտավայրի միջով։ Նրա ձախակողմյան կամ արևելյան ափի հարթ տեղանքով ձգվում է ոչ մեծ բարձրություն ունեցող ցցուն գագաթով բլրաշարք։ Այդ բլրաշարքի հետևում է դարձյալ երեք, նույնպես զուգահեռական բլրաթմբեր կառուցապատված քաղաքային տներով»[7]։

Քաղաքի հիմնման ժամանակ, աշխարհագրական դիրքից բացի, կարևոր գործոն են հանդիսացել նաև հին Գյումրիով անցնող հաղորդակցության ճանապարհները։ Ուսումնասիրվող շրջանում Գյումրին ինչպես տարանցիկ, այնպես էլ ներքին առևտրական ճանապարհների հանգույցներում կարևոր հանգրվան էր։

Ալեքսանդրապոլին բնորոշ է դավանության և սոցիալ-տնտեսական շերտավորման հետևանքով առաջացած թաղերի տերիտորիալ տեղաբաշխման ու կառուցապատման ավանդական սկզբունքը։ Քաղաքի առանձին թաղամասեր կազմակերպվել են աստիճանաբար, կառուցապատվել տարերայնորեն և ելնելով տեղի պայմաններից ու նրանցում ապրող բնակչության ազգային հատկանիշներից, ստացել են յուրահատուկ անվանումներ՝ Զորի բողազ կամ Ռանչպարների մահլա, Կաթոլիկների թաղամաս կամ Ֆրանգների մահլա, Ռուսական թաղամաս կամ Սլաբոտկա, Թուրքական թաղամաս կամ Թուրքի մահլա, Բոշի մահլա և այլն։ Բացի այս թաղերից քաղաքում եղել են նաև միջթաղային առանձին հատվածներ, այսպես ասած փոքրիկ մահլաներ։

«Հնում բազմազգ բնակչություն ունեցող արևելյան քաղաքների մեջ,— գրում է Կ. Ղաֆադարյանը,— միևնույն ազգության պատկանող բնակիչները, համախմբվում էին առանձին թաղերում, որտեղ և կառուցում էին իրենց տաճարները։ Այդ պատճառով էլ քաղաքներում, բացի առանձին արհեստներին վերաբերող համքարային թաղերից, առաջ էին գալիս նաև ազգային հատկանիշներով միմյանցից բաժանվող թաղեր։

Նույնիսկ միևնույն ազգության տարբեր դավանանք ունեցող բնակիչները քաղաքում առանձնանում էին հատուկ թաղերի մեջ։ Այդ ձևով են առաջ եկել արդեն շատ ուշ ժամանակներում ֆրանգանոց (կաթոլիկ հայերի բնակած) թաղերը հայաբնակ մի քանի քաղաքներում»[8]։

---

5 Ա. Երիցյան, Ամենայն հայոց կաթողիկոսությունը և Կովկասի հայք 19-րդ դարում, մասն Ա, Թիֆլիս, 1894, էջ 325։

6 Կ. Ս. Կոզմոյան, Լենինական, Երևան, 1957, էջ 13։

7 Х. Ф. Линч, Армения: Путевые очерки и этюды, Тифлис, 1910, стр. 163.

8 Կ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, Երևան, 1952, էջ 32։

Նշված ձևով թաղերի էին բաժանված նաև Անին[9], Երևանը[10], Նոր Բայազետը (Կամո), Գորիսը, ինչպես նաև Արևմտյան Հայաստանում գտնվող շատ քաղաքներ՝ Կարս, Էրզրում և այլն։

Ուսումնասիրվող ժամանակաշրջանում, քաղաքի ընդհանուր կառուցվածքում թաղերն ունեին տեղաբաշխվածության հետևյալ պատկերը. հյուսիս-արևմտյան կողմում տեղավորված էր քաղաքի սաղմը՝ Գյումրի գյուղը, որը XIX դ. սկզբներին ուներ 70 տուն և զբաղեցնում էր «Չերքեզի» և «Մխչոնց» ձորերի միջև բարձրացող բլրաթմբի արևահայաց լանջերը։ Այստեղ 1867 թ. ջրի ճանապարհ բացելիս հայտնաբերվել է բազիլիկ եկեղեցու հիմնապատեր, իսկ 1970 թ. շինարարական աշխատանքների ժամանակ՝ բազմաթիվ բնակարանների և արտադրական կառույցների փլատակներ։

Հին Գյումրիից դեպի արևելք, քաղաքի հյուսիսում գտնվող ձորակի բերանին և լանջերին տարածվում էին Զորի բողազը և Ռանչպարների մահլան, որտեղից ձորը հետզհետե ցածրանալով, թաղերի փողոցները աննկատելի ձուլում էր քաղաքին, իսկ դեպի հարավ-արևելք փռված էր հայ կաթոլիկների թաղամասը՝ Ֆրանկների մահլան։

Կաթոլիկական թաղամասի արևմտյան կողմում, բլրաթմբի վրա, տարածվում էր հին Գյումրիի գերեզմանատունը (Գորկա զբոտայգու տեղում), իսկ հարավային կողմում՝ Պատվո բլուրը (1878 թ. զոհված զինվորների գերեզմանատունը), ուր կառուցված է ռուսական փոքրիկ եկեղեցին՝ Պլպլան ժամը։ Այստեղ՝ Սլաբոտկայում բնակություն էին հաստատել ռուսական զինվորների ընտանիքները։

Զորի բողազով դեպի քաղաք հոսող Գյումրի գետը, հասնելով Ռուսթավելի (Թբիլիսսկայա, 14-րդ) փողոցը մտնում էր կամարակապ գետնուղին և հոսելով տների ու փողոցների տակով դուրս էր դալիս քաղաքի մյուս ծայրը՝ բարաքները, որտեղից ճանապարհը ձգվում էր երկու երկար, քարե պատերի միջով։ Այս ճանապարհի վրա բացվում էին բոստանների դարպասները, իսկ դիմացի լանջի վրա տարածվում էր 100 տուն ունեցող թուրքական թաղամասը[11]։ Այդտեղից՝ դեպի հյուսիս-արևելք ծայր էր առնում հույների թաղամասը՝ Ուռմոց մահլան, որն ուներ 150 տուն և իր առանձին եկեղեցին[12]։

Մինչև 1837 թ. այդ թաղերից բաղկացած բնակավայրը կոչվում էր Գյումրի։

Գյումրիի փողոցները նեղ էին, ծուռումուռ, տուֆ քարից շարված խուլ պատերով։ Ճարտարապետական միօրինակության մեջ տարաձևություն էին առաջացնում միայն դեպի բակ տանող մուտքերը կամ դարպասները։ Ցածրիկ տները «կույր» էին՝ առանց պատուհանների, դեպի փողոց դարձած հաստ, բութ պատերով։ Թաղերով հոսում էին գետակներ և աղբյուրներ, որոնց պրակտիկ նշանակությունը քաղաքի համար չափազանց մեծ էր։ Դրանք օգտագործվել են խմելու և բանջարանոցները ջրելու համար։ Գետակների և աղբյուրների մոտ կամ դրանց վրա կառուցվել են հասարակական բաղնիքներ, իջևաններ, ջրաղացներ և այլն։

---

9 Վ. Հարությունյան, Անի քաղաքը, Երևան, 1964, էջ 30։

10 Երվանդ Շահազիզ, Հին Երևանը, Երևան, 1931, էջ 173—176։

11 «Մշակ», 1878, № 55։

12 Նույն տեղում։

Գյումրեցիները մեծ նշանակություն են ավել քաղաքի ջրամատակարարման հարցին։ Յուրաքանչյուր տուն և թաղամաս ուներ անհատական ջրհոր և հասարակական օգտագործման աղբյուր։ Հարուստ տներում եղել են նույնիսկ շատրվանով ջրավազաններ։

Ուսումնասիրություններից պարզվում է, որ XIX դ. սկզբներին Գյումրիում կատարվող քաղաքաշինական միջոցառումները նաև ռազմական նշանակություն են ունեցել։ Քաղաքի և նրա բնակչության վիճակը բարելավող միջոցառումները սկսվել են 1840-ական թթ., երբ արհեստների ու առևտրի զարգացման շնորհիվ, Գյումրին դարձավ գավառական կենտրոն և վերանվանվեց Ալեքսանդրապոլ։

1840-ական թթ. Ալեքսանդրապոլի հատակագծից պարզվում է, որ նոր քաղաքը հիմնադրվել է Հին Գյումրի բերդի և նրա տեղում կառուցված նոր բերդի արևելյան կողմում։ Անկասկած, քաղաքի տեղի ընտրությունը բխել է ռազմական նկատառումներից։ Քանի որ թուրքական սահմանը գտնվում էր քաղաքի արևմտյան կողմում, բնական է, որ վտանգը պետք է սպասվեր արևմուտքից, ուստի բերդաքաղաքի ամրոցային կառուցումներն այն օղակել են ինչպես արևմուտքից, այնպես էլ հյուսիսից և հարավից, իսկ արևելյան կողմից՝ «քաղաքն անպարիսպ տարածեալ է ի դաշտակողմն»[13]։

Պաշտպանական կառուցումների այսպիսի տեղադրումը պայմանավորված էր նաև քաղաք մտնող հիմնական երեք գլխավոր ճանապարհների ուղղություններով. հարավից՝ Երևանից եկող, արևմուտքից՝ Ղարսից եկող, իսկ հյուսիսից՝ Թիֆլիսից։ Քաղաքը տեղադրվել է ռելիեֆի համեմատաբար ավելի ցածր տարածության վրա, և չնայած դրա զգալի անհարմարություններին, քաղաքի նոր կառուցապատումը իրականացվել է կանոնավոր ձև ունեցող, ուղղանկյուն խաչվող փողոցների ցանցաձև սխեմայով[14]։

Հին Գյումրիի նորաստեղծ թաղերը տկզբնական շրջանում ստեղծվել են տարերայնորեն, արմատացված հին ավանդական շինարարական հիմունքներով և տարածվել են տեղանքի ռելիեֆին համապատասխան, ուստի բնակավայրը հատակագծային կոմպոզիցիայի տեսակետից ձեռք էր բերել հյուսիսից-հարավ ձգվածություն, որը, միաժամանակ, համապատասխանում էր գետակների ընթացքին ու գերակշռող հյուսիսային քամիների ուղղությանը։

Ահա այս և նման այլ հանգամանքներ որոշիչ դարձան Ալեքսանդրապոլի 1840 թ. հատակագծում հիմնական փողոցների ուղղությունների ընտրման համար։ Այստեղ փողոցները համեմատաբար հարթ են, երկար և իրար են կապում քաղաքի հյուսիսում ու հարավում գտնվող Ռանչպարների, Զորի բողազի և Թուրքի մահլա թաղամասերը։

Հյուսիսից-հարավ ձգվող փողոցներին ճիշտ ուղղահայաց հատվող փողոցները հիմնականում տեղադրված են տեղանքի հորիզոնականներին ուղղահայաց, այդ պատճառով էլ դրանք խիստ ալիքավոր են։ Այս փողոցները միացվել են քաղաքի արևելյան և արևմտյան կողմերում տեղադրված Կաթոլիկների և Հույների թաղամասերին։

---

[13] Ղ. Ալիշան, Շիրակ, Վենետիկ, 1881, էջ 154։

[14] Ю. С. Яралов, Города Армении, М., 1950, стр. 12—13. О. Х. Халпахчян, Армяно-русское культурные отношения и их отражение в архитектуре, Ереван, 1957, стр. 42—43.



Նկ. 1 Ալեքսանդրապոլի 1872 թ. հաստատված հատակագիծը



Նկ. 2 Ալեքսանդրապոլի ընդհանուր տեսքը 1850-ական թվականներին (ըստ Ալիշանի)



Նկ. 3 Լենինականի կենտրոնական մասի հատակագիծը

Նկ. 4 Ալեքսանդրապոլի ընդհանուր տեսքը հյուսիս-արևելքից 1900-ական թվականներին

Քաղաքի փողոցները կանաչապատված չեն եղել և ունեցել են 10—15 մ լայնություն, իսկ երբեմն էլ ավելի նեղ։ Կենտրոնում մի շարք փողոցներ ծածկված են եղել սալաքարերով և լուսավորվել են բարձր սյուների վրա տեղադրված նավթի լապտերներով[15]։

Խաչվող փողոցներում ստեղծվել են կանոնավոր ուղղանկյուն թաղամասեր (կվարտալներ), որոնք ունեցել են տարբեր չափեր (լայնությունը՝ 50—75 մ, երկարությունը՝ 100—150 մ)։ Համեմատաբար մեծ թաղամասերը ունեցել են նրբանցքներ, բայց գերակշռել են առանց նրբանցքների թաղամասերը։ Թաղամասերի կառուցապատումը հիմնականում կատարվել է առանձին տրնամերձերի ձևով, որոնք միմյանց կից դասավորված են եղել հյուսիսից-հարավ ձգվող փողոցների երկայնքով։

XIX դ. երկրորդ կեսին Ալեքսանդրապոլը վերակառուցվում է, որի հետևանքով որոշ փոփոխություններ են մտցվում քաղաքի կենտրոնական մասի կառուցապատման մեջ, պահպանելով նախկին ցանցաձև սխեման։

Նորաստեղծ քաղաքի հատակագծի համար որպես կենտրոն ծառայել է շուկա-հրապարակը (ներկայիս կենտրոնական հրապարակի տեղում)։

Շուկա-հրապարակը աչքի էր ընկնում իր շուրջը գտնվող բազմապիսի շենքերով ու կառուցումներով, այն քաղաքի առևտրական, վարչական, հոգևոր և մշակութային կենտրոնն էր։ Նրա շուրջը կառուցված շենքերի հիմնական մասը հատկացված էր խանութներին և արհեստանոցներին։ Նույնիսկ խանութներ են կառուցվել հրապարակի վրա ելնող եկեղեցիների շուրջը։ «Ժողովուրդը խնդրել է վեհափառից,— գրում է «Մշակ» թերթը,— այդ եկեղեցու (Ամենափրկչի— Ս. Մ.) չորս կողմը գտնված պարսպի առաջ խանութներ շինելու թույլատրելու համար»[16]։

Բացի նշված շուկա-հրապարակից, քաղաքի տարբեր մասերում, գոյություն են ունեցել նաև ուրիշ շուկաներ (Խափան շուկա, Անասնաշուկա, Սև շուկա, Թուրքի բազար և այլն), որոնք միաժամանակ փոքրիկ հրապարակներ էին։ Այդ հրապարակների վրա խաչվում կամ դրանցից սկիզբ էին առնում բազմաթիվ փողոցներ, որոնց վրա կառուցված տների առաջին հարկերում նույնպես խանութներ ու արտադրական նպատակներին ծառայող բաժիններ էին։

Ռուս-թուրքական պատերազմները Ալեքսանդրապոլի առևտրականներին մեծ շահույթ էին բերում։ «Երբ երկու դրացի տերությունները ռազմի պատրաստություն էին տեսնում,— գրում է «Արձագանքը»,— հասարակության, երկրի համար դժբախտություն համարված օսմանեան պատերազմները Ալեքսանդրապոլի առևտրական դասի համար միշտ մեծ ավետիք էին համարվում։ 1853—1856 թվերի պատերազմը հարստացրեց այն քաղաքի գոնե մի որոշ դասակարգը, քաղաքը զարդարեց նշանավոր քարաշեն տներով և բազմաթիվ խանութներով ու խաներով»[17]։

Քաղաքում խաների ու քարավանատների թիվը հասնում էր մոտ մեկ տասնյակի։ Խոշոր քարվանատներից էր Վարդան և Սարգիս Ալմոյանների պանդոկը, որը գտնվում էր նախկին Ալեքսանդրովսկայա (23-րդ փողոց, այժմ

15 Լ ե ո, Անի, Երևան, 1946, էջ 84։
16 «Մշակ», 1872, № 37։
17 «Արձագանք», 1882, № 39, էջ 601։

Աբովյան) և Սապյորնայա (24-րդ փողոց, այժմ Մայակովսկու) փողոցների խաչմերուկում, Գյումրի չայ գետի աջ ափին։ Պանդոկի կամարակապ մուտքը բացվում էր Սապյորնայա փողոցի վրա։ Դարպասի վերնամասում գտնվող օվալաձև և բազմանկյունի շրջանակներում տեղակայված մարմարյա տախտակներից մեկի վրա փորագրված է շենքի հիմնադրման, իսկ մյուսի վրա՝ վարձով տրվելու մասին արձանագրությունները։

ՀԻՄՆԵՑԱԻ։ ՊԱՆԴՈ
ԿՍ։ ԱՅՍ։ Ի 1865։ ԱՄԻ։ ԵՒ
ԱԻԱՐՏԵՑԱԻ։ Ի 1867։ ԱՄԻ։
ՍԵՓՀԱԿԱՆ։ ԾԱԽԻԵԵՔ։ ՄՀԻ։
ՎԱՐԴԱՆԱՅ։ ՄՀԻ։ ՍԱՐԳՍ
ԵԱՆ։ ԱԼՄՕՅԵԱՆՅ։

ՈՐ։ ԱԻԱՆԴԵ։ ՈՐԴԻՈՅՆ։
ՁԱՌՆՈՒԼ։ ՁՀԱԻԱՅԻ Ա
ՆՈՒԱՆԵԱԼ։ ԴՐԱՄՍ։ ՅԱՊՐԱՆՍ
ԳՆԵՑԵԼՈՅ։ ՅԱՅՍՄ։ ՊԱՆԴՈԿԻ։
ԵՒ ՁՀԱՆԵԼ։ ԱՐՏԱՔՍ։ ՁՎԱՐՑ
ՈՂՍ։ ԿՐՊԱԿԱՅ։ ՅԱՌԱՋ։ ՔԱՆ։
ՁԼՐՈՒՄՆ։ ՊԱՅՄԱՆԱԴՐԵԱԼ։ ԺԱ
ՄԱՆԱԿԻ։ Ի ՊԱՏՃԱՌՍ։ ԱԻԵԼԱԳԻՆ։
ՎԱՐՁԱՏԻՐՄԵ։ ԱՅԼՈՅ[18]։

Պանդոկը եղել է երկհարկանի, առաջին հարկը՝ հարմարեցված առևտրի համար համապատասխան խանութներով, իսկ երկրորդը՝ բնակելի նպատակներով։ Կառույցներով շրջափակված ներքին բակը ուներ ջրավազան և սյունազարդ պատշգամբներ։ Ապրանքների համար մառանները և պահեստային սենյակները գտնվում էին նկուղային հարկում։

Պանդոկի հատակագիծը քառանկյունաձև է, կառույցները իրականացված սև և կարմիր, սրբատաշ տուֆ քարով, ծածկերը՝ գլանաձև ու խաչաձև թաղերով։

Ալեքսանդրապոլում շուկաների ու խանութների, պանդոկների ու իջևանատների բազմաթիվ լինելը, նրանց բավականաչափ խիտ դասավորությունը ցույց է տալիս, որ այնտեղ այցելող քարավանների և առևտրականների թիվը բավական մեծ է եղել։ Այդ հանգամանքն էլ անհրաժեշտ դարձրեց քաղաքում պատրաստի ուտելեղենի վաճառքը և գինետների կողքին կառուցվեցին, այսպես կոչված, հատուկ ճաշարաններ, սրճարաններ։

Քաղաքում կային նաև բազմաթիվ բաղնիքներ, որոնցից Կոստանովների բաղնիքը, որ գտնվում է նախկին Բեյբուսովսկայա (այժմ Մ. Գորկու) փողոցի վրա, կառուցված է Գյումրի գետակի աջ ափին և ներկայումս էլ գործում է շնորհիվ իր լավ հարմարությունների։

Ալեքսանդրապոլի ճարտարապետական կառուցվածքում հատուկ տեղ են գրավել եկեղեցական շինությունները՝ Ամենափրկիչ, ս. Աստվածածին, Յոթ վերք, Սև ժամ կամ ս. Նշան, Գեղացոց ժամ, կաթոլիկների, հույների և ռուսների եկեղեցիներ։ Դրանք հիմնականում տեղադրված են եղել հրապարակների վրա, ձև են տվել առանձին թաղերին, ինչպես նաև քաղաքի ծավալա-տարածական կառուցվածքին։

Եկեղեցիներից մեկը՝ Ամենափրկիչը կառուցված է Անիի Մայր տաճարի նմանությամբ։ Նրա մասին «Մշակը» գրել է. «Մոտ ժամանակներս կավարտվի քաղաքիս Նորաշեն եկեղեցու շինարարությունը, որը տասն և չորս

18 Քաղաքի վերակառուցման պատճառով քարավանատունը քանդվել է 1964 թ.։ Արձանագրությունը ընթերցել ենք ինքներս, հանված է դրոշմը, հրատարակվում է առաջին անգամ։

տարի շարունակվում է ու մինչև հիմա 80000 մանեթից ավելի ծախք է արված։ Սա իր մեծությամբ և գեղեցկությամբ համարվելու է երևելիների կարգը»[19]։

Եվ իրոք, այդ գեղեցիկ շինությունը կանգնած է քաղաքի կենտրոնական հրապարակում։ Կառուցել են տոհմիկ որմնադիր-վարպետներ Պապիկ Կարապետյանը (Բարտաշոյանց) և Թադևոս Կարապետյանը (Անտիկյանց) 1859—1873 թթ., Արդար Մանուկի ղեկավարությամբ։

Ալեքսանդրապոլի ճարտարապետությունը չի սահմանափակվում միայն բնակարանային, հասարակական և պաշտամունքային շենքերի կառուցումով։ Քաղաքի վարպետների արվեստի արդյունքն են բավական թվով այլ կառուցներ՝ կամուրջներ, ջրատար գետուղիներ, որոնց շինարարական եղանակները կառուցողների ճարտարապետական ձևերի լավատեղյակության և հնարամտության վկայությունն են։

Ուսումնասիրություններից պարզվում է, որ մինչև 1878 թ. քաղաքի միջով հոսող Գյումրի գետակը գետնուղու մեջ առնված չի եղել և հաճախակի քաղաքը ենթարկվել է մեծ հեղեղումների։ Գետի հորձանքներից անվտանգ դարձնելու և քաղաքը բարեկարգելու նպատակով Գյումրի գետը հատող փողոցներից մի քանիսում կառուցվել են կամուրջներ, իսկ քաղաքի կենտրոնական հատվածում գետը առնվել է գետնուղու մեջ։

Ալեքսանդրապոլի գավառի Շիշթափա գյուղի մոտ գտնվող «Էլլիդարայ» ձորակի կամրջի կառուցման մասին «Մշակում» կարդում ենք. «Ալեքսանդրապոլարնակ աստիճանավոր Ստեփանոս Անանիկեանցը փ նկատի ունենալով երթևեկաց մահադիթ դժվարությունն հիշյալ գետի վրա կառուցում է կամուրջ։ Գեղեցկաշեն դիրք ունեցող կամուրջը կառուցված է չորս քարադարդ և լայնատարած սյուների վրա, որոնք ջրից բարձրանալով վերջանում են կամարակապերով։ Նրա համակ կոփածո քարով շինությունը հարավային կողմում ունեցել է մի փոքրիկ քառակուսի սենյակ, որ տարաժամ երթևեկողների համար ապաստան է ծառայել։ Կամրջի ճարտարագործներն էին հիշյալ եկեղեցու (Փրկչի—Ս. Մ.) շինող վարպետներն, որոնց բնաձիր տաղանդներն արտահայտում են նույն գեղաքանդակ շինություններն։ Զարմանալի է սոցա առանց տեսական գիտության (թեորիայի) կանոնավոր շինությանց մեջ ընդարձակ ասպարեզ ընելներն»[20]։

Լենինականի հատակագծից հայտնի է դառնում, որ քաղաքի կազմավորման ժամանակ, նրա կառուցապատման վրա ներազդող կարևոր գործոններ են հանդիսացել ուսումնասիրվող ժամանակաշրջանի ավատատիրական հասարակարգի կենցաղը, անընդմեջ ռուս-թուրքական և ռուս-պարսկական պատերազմները, ազգաբնակչության մի մասի երկրագործության հետ ունեցած կապը, հետագայում կապիտալիստական հարաբերությունների զարգացումը և քաղաքի արհեստա-առևտրական պրոֆիլը։ Եթե այս ամենը բնորոշեցին քաղաքի ընդհանուր պատկերը, ապա բնական պայմանները, կապված որոշակի պատմական գործոնների հետ, պայմանավորեցին քաղաքի ինքնատիպությունը, հաղորդելով նրան յուրօրինակ դեմք։

---

19 «Մշակ», 1872, № 237։

20 Նույն տեղում, 1878, № 43։

Ալեքսանդրապոլի բերդը կառուցվել է որպես քաղաքաշինական միջոցառում։ Նրա մոտ գտնվող հին Գյումրի բնակավայրը ընդարձակելու և նրա շրջակայքում ազգաբնակչություն կենտրոնացնելու համար, Գյումրի ներգաղթած բնակչությանը տրվել է արտոնություններ, որի շնորհիվ քաղաքը զարգացել է արագ տեմպերով։

Բերդի արագ զարգացումը, և դրան զուգահեռ արհեստա-առևտրական փոխհարաբերությունների աճը, արդեն XIX դ. 50-ական թվականներին Գյումրի բնակավայրը վերափոխեցին գավառային քաղաքի, տալով նրան զինվորական բնակավայրի կերպարանք։

Իր ընդհանուր քաղաքաշինական տվյալներով Լենինականը նախկինում թերևս ամենաքաղաքատիպ բնակավայրն էր Հայաստանում, ուստի նրա քաղաքաշինական սկզբունքների ուսումնասիրությունը մեծ հետաքրքրություն է ներկայացնում։

ПЛАНИРОВКА И ЗАСТРОЙКА Г. ЛЕНИНАКАНА В XVIII—XIX веках

С. Г. МАТЕВОСЯН

Резюме

Как известно, еще до XVIII в. исторические судьбы Ленинакана («Куймари», «Гюмри», «Александрополь») определялись своими многочисленными мрачными событиями, упадком многих культурных традиций, в том числе и строительных.

Положение резко изменилось лишь в 1804 г., когда Гюмри был освобожден русскими войсками, и на очереди было освобождение всей Армении. Именно с этого времени город, прежде всего, получает правильную планировку своего генерального плана, основанного на вековых традициях русской градостроительной культуры.

Однако, в них также начинают возрождаться элементы великолепных традиций мастерства гюмрийских народных зодчих.